



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 105

Ձեռնարկողը՝

<<Ապրիում Պրո Սպուդիո>> ՍՊԸ

Ք. Երևան, Բաղրամյան 26Գ

Գործունեությունը՝

Արտաշատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Արարատ-4, Արարատ-5, Արարատ-6) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվեկարգություն

Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 105

<<17>> 12 2018թ.

Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Արարատ-4, Արարատ-5, Արարատ-6) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկով՝

<<Ատրիում Պրո Ստուդիո>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.
ազդեցության ռազմավարական գնահատման
(ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Արարատ-4՝ ք. Արտաշատ, Ազատական, Արաքսավան, Բաղրամյան, Բերքանուշ, Բուրաստան, Դալար, Դիմիտրով, Հովտաշեն, Մասիս, Մխչյան, Մրգավան, Մրգավետ, Շահումյան, Ոստան, Արարատ-5՝ Աբովյան, Արևշատ, Բարձրաշեն, Բյուրավան, Գետազատ, Դեղձուտ, Դիտակ, Լանջազատ, Մրգանուշ, Նշավան, Ջրաշեն, Վարդաշեն, Արարատ-6՝ Այգեզարդ, Այգեստան, Բերդիկ, Դվին, Կանաչուտ, Հնաբերդ, Նարեկ, Նորաշեն, Վերին Արտաշատ, Վերին Դվին, Քաղցրաշեն, Այգեպատ բնակավայրեր) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պատվերով (N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/1-2):

Առաջադրվող հիմնադրույթային փաստաթղթում ներկայացվել են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական հազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,



• քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Ծրագիրը, համապատասխանում է մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին՝ կանխորոշելով և կանոնակարգելով տարածքների և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները՝ ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանմանն ու բարելավմանը, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների կատարելագործմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը, տարածքի ինժեներական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը, բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համալիրը:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը:

Ըստ կատարված վերլուծության գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Միկրոռեգիոնի կտրվածքով գյուղական բնակչության 48%-ը տեղաբաշխված է խոշոր գյուղական համայնքներում (թվով՝ 11 համայնք), որոնց տեսակարար կշիռը կազմում է գյուղական համայնքների 28.9%-ը, իսկ փոքր գյուղական համայնքներում (3 համայնք՝ կշիռը 7.8%) բնակվում է ընդամենը գյուղական բնակչության 2.8%-ը: Հետևաբար բևեռացված են 14 բնակավայրեր (բոլոր բնակավայրերի մոտ 38%-ը) որոնք ներառում են բնակչության մոտ կեսը: Բնակչության մյուս կեսը տեղաբաշխված է մեծ և միջին համայնքներում: Անտրոպոգեն մեծ բեռնվածություն ունեցող տարածքները հիմնականում ունեն շրջակա միջավայրի ինքնամաքրման և ինքնավերականգման անբարենպաստ ցուցանիշներ:

Բնակավայրերից գերեթե բոլորը կրում են ազլումերատիվ տարրեր՝ հարում են իրար կառուցապատված հատվածներով և կազմելով մեկը մյուսի շարունակություն, հարում են միևնույն միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներին: Սկսած Մխչյանից մինչև Շահումյան գյուղը ներառելով Արտաշատ քաղաքը՝ տարածքային առումով, ընկալվում է որպես մեկ ամբողջական քաղաքաշինական գոյացում, կազմելով «Արտաշատյան ազլումերացիա»:

Տարաբնակեցման համակարգը հիմնականում ձևավորվել է ռելիեֆային առումով համեմատաբար առավել հարթ տարածքներում (Արարատյան հարթավայրում) և դրանց հարող լանջերի ստորոտների հատվածներում: Նշված առանձնահատկությունների հետ կապված կառուցապատումը որոշ հատվածներում կրում է ռելիեֆին ներգծված դարավանդաձև բնույթ:

Բացահայտվել են հատակագծային կառուցվածքների թերի կողմերը, բնապահպանական խնդիրները, կանաչ հանրային տարածքների սակավությունը և փոխադարձ կապերի բացակայությունը:

Հիմնական բնութագրերում նշվել են միկրոռեգիոնին հարող հատվածները. Հարավից՝ Արարատի տարածաշրջանը, հյուսիս-արևելքից՝ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերը, հյուսիս-արևմուտքից՝ Մասիսի տարածաշրջանը:

Տարածքի կլիմայական պայմանները չոր կտրուկ ցամաքային են, ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 12OC, միջին ամսական ջերմաստիճանը հունվարին՝ -4.00C, հուլիսին՝ 24.00C: Միջին տարեկան բացարձակ մաքսիմումը կազմում է 41OC:



Միկրոռեգիոնի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողաձածկեր: Մարզի տարածքի ցածրադիր մասում, տարածված են կիսաանապատային լանշաֆտի տեսակը:

Գետերը պատկանում են Արաքսի ավազանին: Արարատյան հարթավայրով անցնող գետերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Ջրամբարներները ներկայացված են. Ազատի ջրամբարով՝ Ազատ գետի միջին հոսանքում, Լանջազատ գյուղի մոտ: Շահագործման է հանձնվել 1976 թվականին 2.85կմ² մակերեսով և 70.0միլ.մ³ ընդհանուր ծավալով, սնվելով նաև արբյուրներից: Օգտագործվում է ոռոգման համար:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ պարզաբանվել են համընդհանուր խնդիրների համալիրը, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում.

Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, գիշերային լուսավորության համակարգի անցկացում: Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգում, ընդլայնում, կոյուղու համակարգի իրականացում, աղբահանության կազմակերպում: Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորոգումներ, տանիքների վերանորոգում, հանրային տարածքների կազմակերպում:

Նախագծում հաշվի են առնվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները:

Ըստ տնտեսության առկա վիճակի վերլուծություն Արտաշատ համայնքի առաջատար ճյուղերն են՝ արդյունաբերությունը և նյութական արտադրությունը, առևտուրը, ծառայությունները և գյուղատնտեսությունը: Համայնքի տնտեսության առաջատար ոլորտը արդյունաբերությունն է: Այն բազմաճյուղ է, սակայն գերակշիռ ծավալը բաժին է ընկնում մրգերի և բանջարեղենի վերամշակմանը: Մետաղական հանածոների արդյունաբերական պաշարներ չկան: Շատ մեծ է սննդի արդյունաբերության նշանակությունը: Համայնքներում կան նաև կազմակերպություններ, որոնք զբաղվում են խեցեղենի և ճենապակու արտադրությամբ և այլն:

Ոռոգման նպատակով օգտագործվում է ինչպես գետերի ջրերը՝ իրենց ջրանցքներով, այնպես էլ արտեզյան հորերի ջրերը: Լեռնային հատվածներում զարգացած է նաև անասնապահությունը՝ հիմնականում ոչխարաբուծություն, ավելի քիչ՝ խոշոր եղջերավոր անասնապահություն:

Միկրոռեգիոնի հեռանկարային զարգացումները ևս հիմնականում կապված են գյուղատնտեսական զարգացմանը, որի առաջին նախապայմանն է գյուղատնտեսության արդիականացումը, անասնապահական մթերքների փոքր վերամշակող արտադրական կարողությունների ստեղծումը՝ ինտենսիվ այգիների հիմնման, հակակարկտային ցանցերի ներդրման և գյուղատնտեսական տեխնիկայի քանակի ավելացման միջոցով:

Բնապահպանական վիճակի գնահատման արդյունքում դիտարկվող տարածքը գնահատվել է որպես մեկ ճարտարագիտաէկոլոգիական գոտի՝ սահմանափակ բարենպաստ: Կատարած վերլուծության հիման վրա առաջադրվել են շրջակա միջավայրի պահպանության և բարելավման միջոցառումներ: Հողերի պահպանության համար նախատեսվել են ագրոմելիորատիվ միջոցառումներ և տարածքի ինժեներական պահպանության համալիր միջոցառումներ՝ հակաէրոզիոն (հողի բերրի շերտի լվացումը կանխող ոռոգման տեխնոլոգիաների կիրառում, անտառաշերտերի տնկում), հողերի աղակալումը կանխող ցամաքորդային համակարգի վերականգնում, ցանքաշրջանառության կիրառում:



Մակերևութային ջրերի պահպանության համար նախատեսվում է գետի (Ազատ գետ) կոյուղու ցանցի և կեղտաջրերի մաքրման կայանքի ստեղծում: Մթնոլորտային օդի պահպանության համար նախատեսվում է կանաչապատում տարածքով անցնող հիմնական ավտոմայրուղիների երկարությամբ:

Կոշտ կենցաղային թափոնների մասով Արտաշատի տարածաշրջանի ԵՄ չափանիշներով նախագծվող աղբավայրը նախատեսվում է Երևանի աղբավայրը՝ Նուբարաշենի աղբավայրի ավելի ընդլայնված տարբերակը, որում կօգտագործվի գոյություն ունեցող տարածքը: Այն կունենա տարեկան 300 հազար տոննա տարողություն և կարող է ծառայել 20 տարի: Բացի մայրաքաղաք Երևանից, աղբավայրը, երեք փոխանցման կայանների միջոցով, կծառայի Արմավիրին, Արարատին, Վայոց ձորին և Արագածոտնին: Մարզային աղբավայրերը սովորաբար կլինեն 20 հեկտար և նույնպես կծառայեն 20 տարի: Դրանք կծառայեն 6 այլ փոխանցման կայանների միջոցով:

Որպես այլընտրանքային լուծումներ առաջադրվել են թափոնների մշակման հետ կապված այլընտրանքային տեխնոլոգիաները՝ թափոնների չափը նվազեցնելու ամենահաճախ կիրառվող տեխնոլոգիաներից են մեխանիկական ձևով կենսաբանական մշակումը /ՄԿՄ/ և թափոնների այրմամբ էներգիայի ստացումը/ԹԷՍ/:

Ըստ բնակչության և բնակելի ֆոնդի վերլուծության տարածաշրջանի ողջ բնակչությունը կազում է 112414 մարդ, որի մոտ 24%-ը կազմում է քաղաքային բնակչությունը, մնացած 76-ը՝ գյուղականը: Գյուղերում բնակչության նվազագույն քանակը 730 մարդ է (Հնաբերդ), իսկ առավելագույնը՝ 5171 մարդ (Մխչյան): Բոլոր համայնքների բնակելի կառուցապատումը ներկայացված է կապիտալ շինություններով:

Կատարվել է նաև սոցիալական ոլորտի հաստատությունների առկա վիճակի վերլուծություն և հեռանկարային հաշվարկ:

Միկրոռեգիոնի տնտեսական և քաղաքաշինական զարգացման կանխատեսումների համար կատարվել է ռեսուրսային պոտենցիալի գնահատում և օգտագործման ռացիոնալ ուղիների կանխորոշումներ:

Տարածաշրջանը հարուստ է պատմության և մշակութային ժառանգությամբ: Զբոսաշրջության զարգացումը տարածաշրջանի համար ներկայումս առանցքային բաղադրիչ է, թեև նախագծում դիտարկվել և առաջադրվել են միջոցառումներ այն զարգացնելու և ապահովելու կայուն զբոսաշրջային հոսքեր: Որպես տնտեսության խթանման միջոց զբոսաշրջության գերակայությանը զուգահեռ նախատեսվել են նաև ագրոարդյունաբերություն՝ էկոլոգիական մաքուր արտադրանքի մատակարարմամբ, գիտատար արտադրություններ ու ստեղծարար տեխնոլոգիաներ:

Վերլուծության է ենթարկվել և սահմանվել բնապահպանական հիմնականախթի ձևավորման համար անհրաժեշտ տարածքների օգտագործման հարաբերակցությունները՝ բնական լանդշաֆտների, գյուղատնտեսական հողատեսքերի և ուրբանացված տարածքների այնպիսի հարաբերակցություն, որի ժամանակ կպահպանվի բնապահպանական հավասարակշռությունը:

Մատչելիության գոտիների հաշվառումով համայնքների տարածքներում տեղաբաշխված են նախակրթական և կրթական հաստատությունները, ներկայացված հիմնականում 2-3 հարկանի տիպարային նախագծերի հիման վրա կառուցված շենքերով: Տեխնիկական առումով դարձյալ որոշները հիմնանորոգված են, մյուսները՝ մասնակի նորոգված են և մնացած հատվածը գտնվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանի և խիստ կարիք ունեն հիմնանորոգման և արդիականացման: Արտաշատում գործում է «Արատաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, որը ունի նորովի



վերանորոգված մասնաշենքեր: Համայնքների տարածքներում առկա են բուժ. ամբուլատորիաներ:

Առանձին բնակավայրերի հատակագծային կառուցվածքի և հեռանկարային առաջարկների շրջանակում պարզվել է, որ միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի գերակշիռ մասի հատակագծային կառուցվածքները ձևավորվել են տարերայնորեն՝ պատմականորեն ձևավորված քաղաքային միջուկի շուրջ: Բնակավայրերի ծայրամասային հատվածներից շատերում առկա են չօգտագործվող կամ չիչին մասով օգտագործվող արտադրական տարածքներ: Նախագծով առաջարկվել է դրանք վերակազմավորել արդի պահանջներին համապատասխան՝ ազատված տարածքները վերակազմավորելով որպես տարբեր տիպի հանրային տարածքներ (ուսումնարհեստագործական, ստեղծարար տեխնոլոգիաների ներդրման, ժամանցային, մարզական և այլն):

Համայնքների հատակագծային կառուցվածքներում այս կամ այն չափով առկա են ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների համակարգ: Ընդհանուր օգտագործման տարածքներն իրենց մակերեսով չեն բավարարում քաղաքաշինական նորմերի պահանջներին, թեև ներքին կառուցվածքում առկա կանաչ գոտիները, պահպանվում են, բարեկարգվում: Արտաշատ քաղաքում, պահուստների բացակայության պայմաններում նախատեսվել է ճանապարհամերձ 50.0մ լայնությամբ շերտի կանաչապատում և բարեկարգում: Ներկա դրությամբ նշված գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 19.07հա: Բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր: Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է՝ 3015.789հա:

«Արարատ-4,5,6» համայնքներում տեղակայված է 40 գերեզմանոց ընդհանուր՝ 62.0հա տարածքում: Գերեզմանոցները գործող են: Արտաշատ քաղաքում գործում է 2 գերեզմանոց, մնացած համայնքներում գործում է 1 գերեզմանոց: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Անհրաժեշտ է միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները: Մասնավորապես՝ գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար, բացի այդ այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշաք ծառապատում, տարածքի բարեկարգում և կանաչապատում: Որոշ համայնքներում կատարվել են գերեզմանոցների ընդլայնման և աղբավայրերի տարածքների տրանսֆորմացիա:

Ինժեներական ենթակառուցվածքների մասով կատարվել են հետևյալ մշակումները. Արտաշատի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (բացառությամբ Նարեկ բնակավայրի) խմելու ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա ջուր ՓԲԸ-ի կողմից՝ Գառնու աղբյուրներից, որոնց հզորությունը կազմում է 650.0լ/վրկ: Արարատի մարզ մտնող ընդհանուր ջրաքանակը ներկայումս կազմում է շուրջ 1260.0լ/վրկ: Մայրուղային ջրատարների երկարությունը մոտ 870.0կմ է: Բնակավայրերի զգալի մասը խմելու ջուր է ստանում անմիջապես մայր ջրատարից՝ ինքնահոս խողովակաշարերի միջոցով: Զրամատակարարման ներքին բաշխիչ ցանցերի զգալի մասը հին է, տեխնիկապես և ֆիզիկապես մաշված, ինչի արդյունքում հոսակորուստները զգալի տոկոս են կազմում: Դրանք կարիք ունեն հիմնանորոգման և վերազինման:



Ելնելով ռելիեֆային պայմաններից ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնկավայրերի խմելու ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար կիրառելով ճնշման կարգավորիչներ կամ նախատեսելով նոր ՕԿՋ-ներ:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը վտանգավոր է շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային ռեսուրսների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական պատճառը տարեցտարի ավելացող կենցաղային կեղտաջրերն են:

Նախագծում ներառված Արաքսավան, Նորաշեն համայնքները կոյուղացված են մասնակիորեն, սակայն դրանցով հեռացվող հոսքաջրերը ևս առանց որևէ մաքրման բաց են թողնվում բաց ջրահոսքեր:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր համայնքները: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով: Վեդու ջրամբարը նախատեսված է Արտաշատի ջրանցքից 11 պոմպակայանների միջոցով շուրջ 2150.0հա մեխանիկական եղանակով ոռոգվող գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգումը ինքնահոս եղանակով փոխարինելու, շուրջ 1180.0հա գյուղատնտեսական հողատեսքերի ջրապահովվածությունը բարձրացնելու և Սևանա լճից ամենամյա ջրի դոտացիոն ծավալները կրճատելու նպատակով:

Առաջարկվել է կաթիլային համակարգի ներդրումը, որի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչն արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո:

Տարածաշրջանով անցնող գետերի ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու, ոռոգելի տարածքներն ընդարձակելու և ջրապահովվածությունը բարձրացնելու նպատակով, նախատեսվում է նոր ջրամբարների կառուցում: Նախատեսվող նոր ջրամբարների կառուցումը պայմաններ կստեղծի մարզում ընդարձակելու ոռոգելի տարածքները և բարձրացնել ոռոգելի տարածքների ջրապահովվածությունը:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է <<ԷՅ>> ՓԲԸ-ի <<Արաքս>> մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է համայնքների վարչական սահմաններում տեղակայված 10-6/0.4կՎ լարման, հիմնականում մեկտրանսֆորմատորային էլեկտրական ենթակայաններից: Էլեկտրահաղորդման օղային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Բնակավայրերը գրեթե 100 % գազաֆիկացված են:

Դիտարկվել է նաև այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը: Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները (արևափայլի տարեկան տևողությունը հասնում է շուրջ 2100 ժամի), որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման բնագավառում:



<<Արարատ-4,5,6>> տարածական պլանավորման նախագիծն ընդգրկում է 69280.419հա տարածք, այդթվում.

- գյուղատնտեսական նշանակության - 55742.419հա,
- բնակավայրերի- 3350.88հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման - 85.63հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի- 12.75հա,
- հատուկ պահպանվող տարածքներ - 7179.33հա,
- անտառային- բացակայում են,
- ջրային- 942.06հա,
- հատուկ նշանակության - 67.94հա,
- պահուստային - բացակայում են:

Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառական նշանակության և զբաղեցրած տարածքների փոփոխություն չի նախատեսվում: Նախատեսված է բնակչության աճ - 10%-ի չափով: Բնակչության թիվը կկազմի 93500 մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են այգեգործությունը, գինու և կոնյակի արտադրությունը, սննդի արդյունաբերությունը, առևտուրը, խաղողագործությունը, ձկնաբուծությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը:

Կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ <<Արարատ-4, 5, 6>> զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Հիմնադրությամբ փաստաթղթում նախատեսված միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետեր թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում;
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ;
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;



- գազով ջեռուցման կազմակերպում, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները 254.82 տ/տարի;
- արդյունաբերությունում առաջատար տեխնոլոգիաների ներդրում;
- Արարատի ցեմենտի գործարանի համար կիրառել մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն փոշու արտանետումների նվազեցմանը 2-3 անգամ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմամբ, անասնապահության հողագործության զարգացման հետ զուգահեռ կնկատվի օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունները, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է: Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է գնահատման և փորձաքննական գործընթացներին:

Արտաշատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Արարատ-4, Արարատ-5, Արարատ-6-ում նշված համայնքներում տարածքային քաղաքաշինական լուծումների առաջարկման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում իրականացվող նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել



բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

2. Հիմնադրույթային փաստաթղթի գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախազային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ատրիում Պրո Ստուդիո>>ՍՊԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Արարատ-4, Արարատ-5, Արարատ-6) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ՝

Կ. Մովսիսյան

